**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**CHAIRMAN OF THE CENTRAL ELECTORAL COMMISSION**
**OF THE REPUBLIC OF ARMENIA**

---

N 01/11/423
«10» 12 2024թ.

**ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ**
**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ**

*ՀՀ, ք.Երևան, Արաբկիր, Հր. Քոչարի փ., 16, 18*
*էլ. փոստի հասցե՝ zejnalyanartak@gmail.com/*

Հարգելի՛ պարոն Զեյնալյան,

Կից ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Ազգային ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու նպատակով հավաքված ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին» N 12-Ա որոշումը:

Առդիր՝ 1 (մեկ) թերթ:

***Հարգանքով՝***

**Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ՀՀ, ք. Երևան, 0009, Գ. Քոչարի 21ա, հեռ. +374 (10) 54 35 23
21a, G. Kochar Str., 0009, Yerevan, Armenia, tel.: +374(10) 54 35 23
Էլ. փոստ/E-mail: cec@elections.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10 դեկտեմբերի 2024թ. N 12-Ա
ք. Երևան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 7-Ա որոշմամբ գրանցված նախաձեռնող խմբի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացրած ստորագրահավաքի ստորագրված ձևաթերթիկների ստուգման արդյունքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 7-Ա որոշմամբ գրանցված նախաձեռնող խմբի՝ Ազգային Ժողովին օրենքի նախագիծ ներկայացնելու համար «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով պահանջվող քանակի ստորագրությունների վավերականությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ